

Կ'արժէր իմանալ թէ ե'րբ քանդեց բիւզանդականը, ի՞նչ զետեղեց տեղը:

Հանգուցեալ գիտնականը 1910ին հրատարակեց *Amida անուն ստուար աշխատութիւնը*: Ուսումնասիրելով Հայերու միջնադարեան Տիգրանակերտ — Ամիթի յուշարձանները, եկաւ այն եզրակացութեան թէ, քրիստոնէական արուեստին ծագման որորաններն են Կեդրոնական Ասիան, Պարսկաստանը եւ Միջագետքը: Հարաւի հոսանքը Պարսկաստանի վրայով կ'անցնի Հայաստան, Նեհսիա, Մծբին եւ Ամիթ ու յետոյ Արեւմուտք, միեւնոյն ատեն ուղղութիւն տալով բիւզանդական արուեստին: Ստէիկովսքի Ամիթի քրիստոնէական եւ մահմետական յուշարձաններով կը ճշդէ Միջագետքի մեծ դերը արուեստի պատմութեան մէջ:

«Ամիտա»ին յաջորդեց իր ա'լ աւելի ստուար մէկ երկասիրութիւնը, ձեւով մը իր գլուխ գործոցը, այսինքն վերեւ ակնարկուած «Հայաստանի Ճարտարապետութիւնն ու Եւրոպան»: Ասիկա գիրք մըն է որ կը կարօտի մասնաւոր յօդուածի մը: Ասով ամբողջ հայկական գեղարուեստին ենթահողը, անոր կազմութիւնն ու հնարած նորութիւններն են որ կ'ուսումնասիրուին: Այդ հատորով Ստէիկովսքին իր լրումին մէջն է արդէն: Այդ մասին յառաջիկային:

Պէտք է ըսել թէ վերջերս սկսած էր տեսակէտ փոխել: 1932ին *L'amour de l'Art* մէջ ստորագրած յօդուածով գոթական արուեստին ծնունդը Հայաստանէն հիւսիս կը փոխադրէր: Ասիկա ոչ չեւտուած ձեւով մը, սակայն ընկրկումի, փոփոխութեան երանգներ սկսած էին իր մէջը սողոսկիլ:

ՀՐ. ԲԱԼՈՒԵԱՆ

ԹԱՆԿԱԳԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Սեւանի լճին երկաթաբեր (պաղալթ) ապտածմերուն վրայ գտնուած են հնագրեան փորագրուած արձանագրութիւններ որոնք լուսարանուած չէին մինչեւ հիմա: Մասնագէտ մը ճշդած է որ կոթողներու արձանագրութիւնները ասորեստանեան նշաններով են եւ յաջողած է մասամբ կարդալ գտնոմ: Հայ հնագէտ — պատմաբան Օրբէլեան ալ գրաւած է այս արձանագրութիւններով եւ հաստատած է որ արամէական են: Արձանագրութիւնները կը վերաբերին արտաշեսեան — Արտաքսիա շրջանին եւ այս առթիւ կը յիշուի Արտաշէսի հօր անուը որ ցարդ անծանօթ էր: Արձանագրութեանց լրիւ ընթերցումը կոչուած է լուսարանելու ոչ միայն աշխարհի հնագոյն ազգերէն մէկուն՝ Հայերու, այլ եւ ամբողջ Առաջաւոր Ասիոյ պատմութեան կարեւոր մէկ շրջանը որ բաւական մութ մնացած էր: